Նալբանդյան 110
Հեռ.՝ (010) 56 70 31, (010) 58 96 62

www.organic.am
www.shen.am

Օրգանական մթերք

Ի՞նչ է օրգանական գյուղատնտեսությունը

Սույն ձեռնարկը հրատարակվել է «Ծեն» ԲՀԿ-ի
օրգանական գյուղատնտեսության
խորհրդատվական խմբի և «Օրգանական մթերք
արտադրողների և սպառողների ասոցիացիա» ՀԿ-ի
կողմից: Հրատարակության նպատակն է աջակցել ՀՀ-ում
օրգանական գյուղատնտեսության զարգացմանը,
նպաստել հայ ֆերմերի և սպառողի իրազեկվածության
բարձրացմանը օրգանական գյուղատնտեսության և
օրգանական սննդամթերքի մասին

Ավանդականից օրգանական գյուղատնտեսության անցումը ավելի դյուրին դարձնելու համար խորհուրդ է տրվում դիմել «Օրգանական խորհրդատվության խմբին», որը

- կգնահատի տնտեսության պոտենցիալ հնարավորությունները, ռիսկերը օրգանական արտադրության վարման համար
- կպարզաբանի օրգանական գյուղատնտեսության վարման մեթոդները
- կաջակցի տնտեսության վարման փաստաթղթերի փաթեթի կազմման, աշխատանքների ճիշտ պլանավորման հարցում
- կօգնի ստանդարտի պարզաբանման հարցերում,
- կմատուցի ընթացիկ խորհրդատվություն ծագած խնդիրների վերաբերյալ,
- մասնակի սուբսիդավորման աղբյուրներ կփնտրի սերտիֆիկացման գումարը վճարելու համար,
- կիրազեկի համաշխարհային օրգանական արտադրության նորությունների և նորարարությունների մասին,
- կօգնի կապ հաստատել առևտրային կազմակերպությունների հետ և վաճառել արտադրանքը:

Շեն ԲՀԿ խորհրդատուները անհատական մոտեցում են ցուցաբերում յուրաքանչյուր տնտեսությանը և մասնագիտական խորհրդատվություն են տալիս բուսաբուծական, անասնապահական ճյուղերի, ինչպես նաև մթերքի վերամշակման, մեղվաբուծության, մթերքի չորացման արտադրական ճյուղերի զարգացման ուղղությամբ:

Ի՞նչ է օրգանական գյուղատնտեսությունը

Առաջին օրգանական տնտեսությունները Եվրոպայում հայտնվեցին անցյալ դարի առաջին կեսին: Սակայն օրգանական գյուղատնտեսության գաղափարը շատ ավելի հին պատմություն ունի: Եվ որպես ուղղություն սկսեց ձևավորվել և կայունանալ անցյալ դարի վերջին:

Գոյություն ունի, օրգանական գյուղատնտեսության բազմաթիվ սահմանումներ, սակայն այդ բոլոր սահմանումների հիմնական գաղափարը մեկն է. գյուղմթերքի արտադրության տնտեսական շահավետությանը զուգընթաց ուշադրություն դարձնել բնության հիմնախնդիրներին: Նվազագույնի հասցնել մարդու բացասական ազդեցությունը բնության վրա, նպաստել ագրոէկոհամակարգի կայունությանը և առողջացմանը, ինչպես նաև կենսաբազմազանության պահպանմանը:

Օրգանական գյուղատնտեսությունը նպատակ է հետապնդում ստանալ էկոլոգիապես մաքուր, բնական և մարդու օրգանիզմի համար անվտանգ գյուղատնտեսական արտադրանք, միաժամանակ ճիշտ օգտագործելով բնության ռեսուրսները՝ դրանք անընդհատ լրացնելու պարտադիր պայմանով: Կարծիք կա, թե գյուղատնտեսության վարման այս եղանակը վերադարձ է դեպի մեր նախնիների ավանդական գյուղատնտեսությանը: Որոշ չափով դա այդպես է, սակայն այժմ օրգանական գյուղատնտեսությունը վարում են գիտական, հետազոտական լուրջ աշխատանքների արդյունքների և մեքենայացման օգտագործմամբ՝ միաժամանակ պահպանելով բնական հավասարակշռությունը:

Ինտենսիվ գյուղատնտեսության զարգացմանը զուգընթաց զգալի աճեցին պեստիցիդների և հանքային պարարտանյութերի կիրառությունը գյուղմթերքի արտադրության բնագավառում: Արտադրողը կարողացավ միավոր մակերեսից ստանալ շատ ավելի բարձր բերք, ավելի արդյունավետ պայքարել վնասատուների և հիվանդությունների դեմ: Սակայն անցավ մի քանի տասնամյակ, և սկսեց ի հայտ գալ պեստիցիդների և հանքային պարարտանյութերի պատճառած վնասը: Քիմիկատների օգտագործումը բերեց հողերի որակի վատացման, աղտոտեց օդը և բազմաթիվ ջրային ավազաններ: Դա իր հերթին բացասաբար անդրադարձավ կենդանի օրգանիզմների վրա, խախտվեց էկոհամակարգերի ներդաշնակությունը: Այս ամենը բնականաբար բերեց մաքուր, անվտանգ սննդի խիստ պահանջարկի:

Եվ զարմանալի չէր այն փաստը, որ ինտենսիվ գյուղատնտեսությանը զուգընթաց, վերջին մի քանի տասնամյակների ընթացքում ծնվեց նոր ճյուղ՝ օրգանական գյուղատնտեսությունը: Օրգանական գյուղատնտեսությունը, կարևորելով շրջակա միջավայրի պահպանությունը և էկոլոգիապես մաքուր սննդի ստացման գաղափարները, կարճ ժամանակահատվածում լայն տարածում գտավ աշխարհի տարբեր երկրներում:

Օրգանական գյուղատնտեսությունը որոշ չափով մտածելակերպ է, ապրելակերպ, հոգեվիճակ: Ֆերմերը պետք է կարողանա բացի հողից և աճեցվող բույսից ավելի լայն հայացք գցել շրջակա միջավայրի վրա. տեսնել ու հասկանալ, թե ինչպիսի բուսական ու կենդանական աշխարհ է շրջապատում իր տնտեսությունը, իր գյուղատնտեսական գործունեությունը ինչպես է ազդում բնության վրա:

Խորհրդատվական ծառայություն

Օրգանական գյուղատնտեսությունը էականորեն տարբերվում է ինտենսիվ գյուղատնտեսությունից: Այդ պատճառով օրգանական արտադրության անցնելու համար անհրաժեշտ է որոշակի գիտելիքներ ունենալ:

2005թ-ից «Շեն» ԲՀԿ-ի կողմից առաջին անգամ Հայաստանում ստեղծվեց օրգանական գյուղատնտեսության խորհրդատվական ծառայություն, որը գործում է մինչև օրս: Այն խորհրդատվություն է մատուցում ֆերմերներին օրգանական գյուղատնտեսության հիմնական հարցերի, օրգանական ստանդարտների վերաբերյալ, օգնում սերտիֆիկացման դիմելու գործընթացում:

Սկսած 2005 թ-ից խորհրդատվական խումբը աշխատել է ավելի քան 370 ֆերմերների հետ, որոնք ցանկություն են հայտնել իրենց տնտեսությունները վարել օրգանական եղանակով: Խորհրդատվական խումբը աջակցում է ֆերմերին ավելի հեշտ իրականացնել անցումը ավանդական մշակությունից դեպի օրգանական և պատշաճ կերպով ներկայացնել պահանջվող փաստաթղթերը:

2006թ-ից «Շեն» ԲՀԿ-ի կողմից ստեղծվել է «Օրգանական մթերք արտադրողների և սպառողների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, որին անդամագրված են բազմաթիվ ֆերմերներ ՀՀ տարբեր մարզերից, վերամշակողներ և «օրգանական արտադրությանը» գաղափարապես մոտ կանգնած սպառողներ:

Օրգանական արտադրության սերտիֆիկացում

Օրգանական գյուղատնտեսության մեջ սերտիֆիկացումը խիստ կարևոր գործընթաց է, առանց որի արտադրողը իրավունք չունի այն վաճառել կամ ներկայացնել որպես օրգանական: Որպեսզի արտադրանքը հնարավոր լինի վաճառել կամ արտահանել որպես օրգանական, այն պետք է պարտադիր ունենա սերտիֆիկատ: Սերտիֆիկատը թույլ է տալիս գնորդին, արտահանող կամ ներկրող պետությանը լիովին վստահ լինել, որ այդ մթերքը արտադրվել է օրգանական գյուղատնտեսության ստանդարտի պահանջները լիովին պահպանելով: Եթե մթերքի վրա կա սերտիֆիկացիոն մարմնի տարբերանշանը կամ մթերքն ունի սերտիֆիկատ՝ այն համարվում է օրգանական:

Սերտիֆիկացման գործընթացը սկսվում է այն պահից, երբ ֆերմերը դիմում է սերտիֆիկացնող մարմնին և ցանկություն է հայտնում զբաղվել օրգանական գյուղատնտեսությամբ:

Օրգանական գյուղատնտեսությունը վարվում է օրգանական գյուղատնտեսության ստանդարտին համապատասխան: Սերտիֆիկացնող մարմինը սկզբից մինչև վերջ ստուգում է ողջ արտադրության ընթացքը և ստանդարտի պայմանների բավարար կատարման դեպքում միայն տրամադրում սերտիֆիկատ:

Յուրաքանչյուր արտադրող սերտիֆիկացվում է ամեն տարի և յուրաքանչյուր տարվա արտադրանքի համար ստանում է նոր սերտիֆիկատ:

Սերտիֆիկացման ծառայությունը վճարովի է:

Սերտիֆիկատի նպատակն է

- հավաստիացնել, որ տվյալ արտադրությունում սերտիֆիկացնող մարմնի կողմից վերահսկվել են արտադրության բոլոր փուլերը՝ մշակում, պահեստավորում, փաթեթավորում, փոխադրում, իրացում և դրանք բոլորը համապատասխանում են օրգանական գյուղատնտեսության ստանդարտի պահանջներին
- պաշտպանել սպառողին շուկայում առկա կեղծիքներից՝ ոչ օրգանական արտադրանքը օրգանականի տեղ ներկայացնելուց

Օրգանական գյուղատնտեսությունը հեռանկարային ուղղություն

Ինտենսիվ գյուղատնտեսության հաջողությունները ոչ միայն ոգևորում, այլ նաև մտահոգում էին բանկչության ավելի գիտակից զանգվածին. արտադրվող բնամթերքում սկսում էր ավելանալ քիմիական հավելումների և վտանգավոր նյութերի քանակը: Մարդու առողջության հիմնական գրավականը առողջ և մաքուր սնունդն է, իսկ ներկայումս սպառվող սննդամթերքների մեծ մասը դժվար է համարել առողջ և էկոլոգիապես մաքուր, քանի որ դրանք պարունակում են մեր օրգանիզմի համար վտանգավոր քիմիական հավելումներ, ծանր մետաղներ, ԳՓՕ (գենետիկորեն փոխակերպված օրգանիզմներ) և այլն:

Օրգանական գյուղատնտեսությունը կարևորելով շրջակա միջավայրի պահպանության և անվտանգ, մաքուր մթերքի ստացման խնդիրները՝ արագ զարգացավ և ընդունվեց աշխարհի շատ երկրներում: Կարճ ժամանակահատվածում օրգանական մթերքը մեծ հետաքրքրություն առաջացրեց սպառողների և արտադրողների մոտ, ձևավորելով հստակ պահանջարկ:

Այսօր օրգանական գյուղատնտեսությունը համարվում է սննդարդյունաբերության ամենաարագ զարգացող ճյուղերից մեկը, իսկ օրգանական մթերքն ունի իր կայուն տեղը սննդամթերքի համաշխարհային շուկայում: Օրգանական եղանակով մշակվող հողատարածությունները հասնում են տասնյակ միլիոն հեկտարների՝ հետզհետե ընդգրկելով ավելի մեծ հողատարածություններ, և համապատասխանաբար օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող նոր ֆերմերներ: Ամեն տարի կազմակերպվող օրգանական արտադրության միջազգային ցուցահանդեսները, քննարկումները և անընդհատ ավելացող մասնագիտացված օրգանական սննդամթերքի խանութները վկայում են, թե որքան հեռանկարային է օրգանական արտադրության բնագավառը:

Եվրոմիության, ԱՄՆ-ի և այլ խոշոր, զարգացած երկրները, բացի տեղական օրգանական արտադրությունից, մեծ քանակներով օրգանական մթերք են ներկրում աշխարհի տարբեր երկրներից: Այն համարվում է եկամտաբեր ոլորտ, քանի որ, օրգանական մթերքն ունի ավելի բարձր գին, քան ինտենսիվ գյուղատնտեսությամբ ստացված մթերքները:

Հայաստանում կան լավ նախապայմաններ օրգանական գյուղատնտեսության զարգացման համար: Կան այնպիսի վայրեր, որտեղ արդեն երկար տարիներ է, ինչ չեն օգտագործվում թունաքիմիկատներ և հանքային պարարտանյութեր, իսկ հողը համեմատաբար աղտոտված չէ: Շնորհիվ մեր բնակլիմայական պայմանների, Հայաստանում աճող պտուղ-բանջարեղենն օժտված է յուրահատուկ համային բարձր հատկանիշներով: Եվ այդ ամենն արտադրելով առանց թունանյութերի և հանքային պարարտանյութերի՝ կարող ենք ներկայացնել մեր գյուղմթերքը միջազգային հանրությանը նոր պիտակով. օրգանական մակնշմամբ: Օրգանական մթերքի շուկայական արժեքը ավելի բարձր է սովորականից, որն էլ երաշխիք է հավելյալ եկամտի ստացման: Օրգանական արտադրությամբ կարող են զբաղվել և՛ մեծ, և՛ փոքր արտադրողները, քանի որ այստեղ մրցակցությունը գնում է ոչ թե քանակի, այլ որակի համար:

Օրգանական գյուղատնտեսությունը հայ ֆերմերի համար կարող է դառնալ նոր, հեռանկարային և եկամտաբեր ոլորտ:

Ընտրենք բնականը՝ ՕՐԳԱՆԿԱՆԸ:

Օրգանական գյուղատնտեսության մի քանի սկզբունքները

Օրգանական գյուղատնտեսությունը ունի պարտադիր պայմաններ, որոնց պետք է հետևի օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվող յուրաքանչյուր ֆերմեր:

- Տնտեսությունը դարձնել հնարավորինս ինքնաբավ, այսինքն, նվազագույնի հասցնել դրսից ներմուծումները, անհրաժեշտ բոլոր նյութերն արտադրել և ստանալ տնտեսության ներսում, իսկ գոյացած թափոնները վերամշակել և վերաօգտագործել
- Հողը պարարտացնել օրգանական պարարտանյութերով՝ գոմաղբ, թռչնաղբ, կոմպոստ, կենսահումուս, կանաչ պարարտացում և այլն
- Կիրառել ցանքաշրջանառություն, առավելությունը տալով բակլազգի բույսերին
- Շեշտը դնել բույսերի և կենդանիների հիվանդությունների կանխարգելման, և ոչ թե բուժման վրա
- Չկիրառել օրգանական գյուղատնտեսության մեջ արգելված բուժանյութեր և հանքային պարարտանյութեր
- Բացառել գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների օգտագործումը
- Նախապատվությունը տալ տեղական սորտերին և ցեղերին

Օրգանական գյուղատնտեսության կարևոր սկզբունքներից մեկն էլ այն է, որ արտադրության ամբողջ ընթացքը վարվում է օրգանական գյուղատնտեսության ստանդարտին համապատասխան:

- Օրգանական արտադրությունը սերտիֆիկացվում է
- Օրգանական արտադրանքը մակնշվում է